Լ. ՋՐԼՈՎ

ՈԼՅԱՅԻ ՁՄԵՌԸ

ԴԵՏԼՐԱՏ

1923

Legend. [illegible]

Negryf. z Stary

1938 r. 2 n

3.II	5.II		341

ԼԵՎ ՉԻԼՈՎ

891.71-93
Զ
ՍԵՓԱԿԱՆ է 1961 թ.

ՈԼՅԱՅԻ ՉՄԵՌԸ

Թարգմ. Դ. Ս. Ր. ՀԱԿՈԲՅԱՆ
Նկարները՝ Ա. ԴԱՎԻԴՈՎԱՅԻ

F
A 22758
1923

ՊԵՏՀՐԱՏ
ՀԱԿՅԵՍ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1938

ՀԱՅԿ ԴԵՊՈՒԹՅԱՆ ՆԵՐՔ
ՓՐԻՆՏՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ



ՍԱՌՑԱԼՈՒԼԱՆ

Փոքրիկ Ոլյան կանգնած է դռան պատիկ պատշգամբում։ Կարմիր-կարմիր արև է։ Ջյունը կայծերի պես ցոլում է։ Սառնամանիքը մարդու քիթ ու ականջ է դաղում։ Ի՞նչ լավ է։

Բայց ամենից լավը սառցալուլան է՝ յերկար, գազարի պես հաստ ու ինքն էլ՝ կարծես խնկական ապակուց։ Այ թե ձեռքս ընկներ։

Ոլյան տեսնում է, վոր փայտը ձեռքին մի ոտար քեռի յե անցնում մոտով։

— Քեռի, այն լուլան գցեմ։ Ա՛յ, հրեն կախ ընկած է։

Քեռին փայտով խփեց— լուլան վայր գցեց։ Բայց լուլան ծլրնգ՝ ընկավ ձյան մեջ, թաղվեց, ել չերևաց։

Ույան մտնում է ձյան կույտի մեջ, վոր լուլան հանի։ Գնում, գնում, որորվում ընկնում է։ Հենց սառցալուլի թաղված տեղը։ Հենվում է... Ու ձեռքերի վրա ընկնում ձյան մեջ։ Ձյունը լցվում է թևքերը։ Թպրտում, թպրտում, հազիվ դուրս է գալիս։ Դե հիմա յեկ ու լուլան գտիր։ Վոնց գտնես։ Ամբողջ ձնակույտը տրորվել է։

Ույան տեսնում է, վոր թիակն ուսին՝ մի ուրիշ քեռի յե մոտովը անցնում։

— Քեռի՛, լուլան ձյունի տակից հանե՛ս։ Ա՛յ, այնտեղ կախ ընկած ե։

Փայտով ցած գցեցինք։ Ընկավ ձյան մեջ։ Ա՛յ, այստեղ։

Բեռին ամբողջ ճնակույտը թիակով քանդում—գցում է ճանապարհի վրա։

Լուլան հենց այդտեղ եր, վոր կար։

Ոլյան լուլան վերցնում—վազ է տալիս տուն։

— Մայրիկ, սառցալուլա յեմ գտել։

Մայրիկը նայում է Ոլյային։

— Վայ ամոթ, այդ վիրտեղ ես այդպես թավալ տվել։ Լուլան դիր ափսեյի մեջ։ Շուտ շորերդ հանիր։

Մայրիկն Ոլյայի հագից

փոքրիկ մուշտակը, վալենկաներն ու գլխարկը հանեց, ձյունը թափ տվեց ու նրա ձեռքերը սրբեց։ Իսկ Տիմկա շնիկը թռչկոտում, վազտում է. խաղալ է ուզում։ Ոլյան հանվեց, պահարանից վերցրեց ծայրին թուղթ կապած թելն ու միջանցքում սկսեց Տիմկայի հետ վազվզել։ Վազվզեց, վազվզեց, հոգնեց։ Ճաշն էլ արդեն պատրաստ է։

Ոլյան ճաշեց ու հիշեց իր սառցալուլյանը։ Գնաց փնտրելու։

Ափսեն դատարկ, բայց մեջը՝ ջուր։ Իսկ լուլյան չկա ու չկա։

— Մայրիկ, ուր է իմ լուլյան։ Ձեմ իմանում՝ ափսեյի մեջ ով է ջուր լցրել, լուլյան էլ դեն գցել։

— Այ, ա՛յ,—ծիծաղում է մայրիկը։—Բաշեռ իմանում, վոր լուլյան սառցից է, իսկ սառույցը տաք տեղը հալվում է։ Ջուրը սառցնես՝ սառույց կդառնա։ Սառույցը տաքացնես՝ ջուր կդառնա։

ՀԵՏՔԵՐԸ

Ոլյան առավոտը դուրս յեկավ բակն զբոսնելու։ Տեսնում է՝ բոլոր շավիղները ձյունը ծածկել է։ Ձյան միջով է գնում։ Ձյունը փորփոշ է, փափուկ։ Վրայով դեռ գնացող չի յեղել։ Ոլյան առաջինն է։

Վո՛չ, առաջինը չե։ Հրե՛ն, ելի մի բանի հետք կա։ Դարձյալ պատիկ տոնածառի նման է, միայն թե ավելի մեծ։ Բայց հրե՛ն, ելի հետքեր՝ պուճ-պուճ։ Տոնածառի նմանող հետքերը հանկարծ կորչում են, իսկ պուճ-պուճ հետքերը յետ են դառնում։ Իսկ ձյունն ելի փափուկ է, փորփոշ։ Վրայով դեռ գնացող չի յեղել։ Ոլյան առաջինն է։

Վո՛չ, առաջինը չե։ Հրե՛ն, ելի ի՞նչ հետք կա՝ յերկու զոլանի։ Զոլերը լայն են—վրայով

կարելի յե քայլել։ Ձուլերը յետ են դարձել դեպի ձյան կույտը, գնացել են առաջ, թեքվել տան հետևն ու ել չկան։ Բայց հրեն, ելի հետքեր՝ վանդակավոր, գործած, մեծ-մեծ։ Մի շավղից դուրս են յեկել ու դեպի մյուսը գնացել։ Ձյունը դարձյալ փափուկ ե, փոր-փոշ։ Վրայով գնացող չի յեղել։ Ոլյան առաջինն ե։

Ոլյան հասավ մորաքույր Կատյայի պատշգամբին։ Մորաքույր Կատյային հյուր ե յեկել։ Նստեց սնդուկին։ Նստել՝ նոր կրկնակոշիկներով թխթխկացնում ե սնդուկին ու պատմում պստիկ տոնածառի նմանող փոքրիկ հետքերից և բծանման հետքերից... Իսկ մորաքույր Կատյան ասում ե.

— Այդ ծիտիկն ե թռչկոտել, իր համար կուտ փնտրել ու պստիկ տոնածառի պես հետքեր թողել։ Բծերի նմանող հետքերն ել կատուն ե թողել։ Ծիտիկը կատվին տեսնելուն պես թռել ե, ու նրա հետքերը վերջացել են։ Կատուն ել տուն ե

գնացել։ Ագռավը թռչկոտել, կուտ է փնտրել ու մեծ տոնածառի պես հետքեր թողել։ Ուռճ-պուռճ հետքերն էլ մեկն ու մեկի շունն է թողել։ Ագռավը շանը տեսել, վախեցել, թռել—գնացել է, ու նրա հետքը վերջացել է։ Իսկ շունը տուն է գնացել։ Զուլավոր հետքերն էլ Միշայի թողածն են—նա յե դահուկներով սահել։ Իսկ վանդակավոր հետքերը Յեգոր պապի տրեխներինն են։

Այսպես բոլորի մասին էլ իմացավ Ալյան։ Վոչ վոքի չի տեսել, միայն հետքեր է նկատել, բայց բոլորի մասին էլ իմացավ, թե ով ուր և ինչու յե գնացել։

Ալյան գնում է տուն։ Տեսնում է՝ ձյան վրա էլի նոր հետքեր կան։ Մորաքրոջ պատշգամբից մինչև տուն հասնելը։ Քյարթ-

քյարթ՝ նախշած գաթի պես։ «Այդ յես եմ նոր կրկնակոշիկներով գնացել մորաքույր Կատյայի մոտ,—մտածում է Ոլյան։ Հիմա իմ մասին ել բոլորը կիմանան։ Քյարթ-քյարթ՝ նախշուն գաթի պես հետքերս կտեսնեն ու կճանաչեն»։

ՎՈՉՆԻԿԸ

Ալյան ու մայրիկը հյուր եկին գնում մորաքույր Կլաշայի տուն։ Մորաքույր Կլաշան հեռու՝ Էլեկտրական գործարանի մոտ է ապրում։ Գործարանում նա էլեկտրական լամպիկներ է շինում։ Ամբողջ քաղաքն ավտոբուսով պետք է անցնեն։ Ա՛յ հետաքրքիր բան։ Մեկ տրոլեյբուսն է սլանում, մեկ՝ տրամվայը, մեկ կարմիր բանակայիններն են յերգելով անցնում, մի տեղ խաղալիքների խանութ է, մի տեղ՝ տիկնիկ-յերեխաների խանութ. սարից այնպես են սլլում, ասես խա-

կական լինեն։ Բա ժողովուրդը, ժողովուրդը։

Տեղ հասան, իսկ մորաքույր Կլաշան յերկու կատու և մի փոքրիկ վոզնի ունի։

Ոլյան մտնելուն պես կատուներին տեսնում է։ Կատուներից մեկը գորշագույն է, մյուսը՝ շեկ։ Յերկուսն ել մորաքույր Կլաշայի մահճակալին քնած են։ Իսկ վոզնիկը չի յերևում։

— Բա ո՞ւր է քո վոզնիկը,—հարցրեց Ոլյան։

— Միքիչ սպասի՛ր։ Հենց վոր մութն ընկնի, կգա,—ասաց մորաքույր Կլաշան։—Հրե՛ն, նրա ամանն անկյունում դրած է։ Նա իմ գիշերային ընակիչն է։ Ամբողջ ցերեկը քնում է, իսկ գիշերը ման է գալիս։

Ոլյան սպասեց, շատ սպասեց։ Վաղուց մութն ընկել եր։ Ելեկտրական լամպը վառել ելին, բայց վոզնիկը չկար ու չկար։ Սպասելուց ձանձրացավ, սկսեց գնդակ խաղալ։ Նստեց հատակին։ Գընդակը գլորեց դեպի բուֆետը, կպավ բուֆետին ու յետ դարձավ դեպի Ոլյան։ Հանկարծ գնդակը ծլի՛նգ՝ ընկավ բուֆետի հետևն ու հենց այնտեղ ել մնաց։ Ոլյան

գնաց գնդակը վնտրելու, բայց բուֆետի հետևից փը՛ֆ-փը՛ֆ-փը՛ֆ... ասես ավտոմոբիլ լիներ։ Ոլյան վախեցավ—փախավ մայրիկի մոտ։

— Այնտեղ՝ բուֆետի հետևը մեկը փընչ-փընչում է։

— Վոզնիկն է, ելի,—ասում է մորաքույր Կլաշան,—դու քո գնդակով նրան արթնացրել ես։

— Բա ինչու չե փնչացնում։

— Քեզ է վախեցնում։

— Նա մեծ է։

Իսկ վոզնիկը դուրս չեկավ։ Կլոր է, բոլոր կողմերից ասեղներ են ցըցված։ Դունչը կարծես խոզի դունչ լինի, միայն թե մազի մեջ կորել է։ Գալիս է, բայց քարշ գալով, առանց շտապելու։ Կանգ է առնում, դունչը բարձրացնում, չորս կողմը պտտացնում ու նորից քարշ է գալիս։

— Ամանը տուր մի տեսնեմ,—ասում է մորաքույր Կլաշան,—նրա համար ընթրիք պատրաստենք։

Հացը բրդեց, վրան կաթ լցրեց ու դրեց հատակին։ Վոզնիկը դեռ ամանին չհասած՝ յերկու կատուն եկ վրա պրծան ու սկսեցին կաթը լակել։ Վոզնիկը մոտեցավ, խցկվեց նրանց արանքը և ինքն եկ սկսեց ուտել։ Միայն թե չի լակում, այլ չպչպացնում է։ Ասես խոզ լինի։

Մինչ նա առանց շտապելու չպչպացնում էր, կատուները նրա ամբողջ ընթրիքը կերան ու գնացին։

Վոզնիկը մնաց մենակ, դունչը կախ գցեց հատակին ու մնաց անշարժ։

— Նա քնեց,—հարցրեց Ոլյան։

— Վո՛չ,—պատասխանեց մորաքույր Կլաշան,—կատուներից է նեղացել։ Հրե՛ս, հիմա նրա ամանը նորից կլցնեմ, և նա իսկույն կաշխուժանա։

Մորաքույր Կլաշան ելի հաց բրդեց ու վրան կաթ լցրեց. Վոզնիկը դունչը բարձրաց-

րեց, քիթը ման ածեց, առջևի թաթերը դրեց ամանի մեջ ու սկսեց չպչպացնել։

— Կատուները գալիս են,—գոչեց Ալյան։— Բռնեք դրանց։

Սկսում է նրանց քշել, բայց մեկ է, նրանք մեջ են ընկնում։

— Վոչինչ, թող գան։ Հիմա արդեն նա նրանց կքշի,—ասաց մորաքույրը Կլաշան։

Յեվ իսկապես։ Գորշ դույնի կատուն տեղավորվեց, վոր կաթը լակի, իսկ վոզնիկը կողքով հրեց նրան։ Ծակծկեց ու վռնդեց։ Շեկ կատուն տեղավորվեց։ Վոզնիկը նրան ել կողքով հրեց։ Ծակծկեց ու վռնդեց։ Յեվ մենակ ու ազատ սկսեց չպչպացնել։

ՉՄՈՒՇԿՆԵՐԸ

Հայրիկը պահարանից մի փաթեթ հանեց։ Բաց արեց ու ասաց.

— Վա՜հ, բոլորը ժանգոտել են։

— Ո՞վ են «ժանգոտել», — զարմանում է Ալյան։ — Մի տեսնեմ։

Հայրիկը փաթեթը ցույց տվեց, մեջը չմուշկներ են։ Միշայի չմուշկների պես։ Միայն Միշայինը մեծ են, իսկ սրանք՝ փոքր։ Միշայինը նոր են, մաքուր, փայլուն։ Իսկ սրանք՝ հին, կեղտոտ, շեկ։ Պտուտակները եվ չեն պտտվում։

— Այս ում դարձվորներն են, — հարցնում է Ալյան։

— Իմն եյին, իսկ հիմա քոնը կլինեն։

22758

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

— Այդպիսի բան ինձ պետք չի։ Թո՛ւ, ինչի՞ նման են։ Չեմ ուզում յերեսն էլ տեսնել։

— Ե՛հ, մի՛ տեսնի... Մինչև վաղն առավոտ մի՛ տեսնի։ Չե՞։

— Ինչո՞ւ այդքան ուշ։

— Մինչև առավոտ յես կնորացնեմ։

— Վո՞նց չե, կանես... Ի՞նչպես։

— Ա՛յ, կիմանաս։

— Հայրիկը մի կոշտ թուխտ հանեց և սկսեց չմուշկներից մեկը սրբել։ Սրբեց, սրբեց, յերկար սրբեց։ Ոլյան կողքին կանգնել նայում է։

— Չե՞ վոր դու չեյիր ուզում սրանց յերեսը տեսնել, — ասում է հայրիկը, — բայց նայում ես։

— Յես դրանց չեմ նայում, թղթին եմ նայում։

Հայրիկը չմուշկը սրբում ու սրբում է, և չմուշկը մաքրվում—դառնում է նոր չըմուշկ։ Հետո սկսում է մյուսը սրբել, և մյուսն էլ նրա պես է դառնում։

Հայրիկը հոգնում է, յերկու չմուշկն էլ դնում է աթոռին ու սկսում թերթ կարդալ։

— Հայրիկ,— ասում է Ոլյան,— մեկ է, պտուտակները չեն պտտվում։

— Սպասիր,— պատասխանում է հայրիկը՝ յերեսը թաղելով թերթի մեջ,— պտուտակներն էլ կպտտվեն։

— Յերբ։

— Ճաշից հետո...

Ճաշից հետո հայրիկը պառկեց բազմոցին ու քնեց։

Ոլյան ստիպված եր տիկնիկ խաղալ, թե չե՝ ձանձրալի յեր։ Տիմկայի գլուխը մի ջնջոց փաթաթեց, իբր թե հագցրեց, նստեցրեց փոքրիկ գորգին և սկսեց տիկնիկները նրա մոտ հյուր տանել։

Տիկնիկը մոտենում է ու ասում.

— Բարև՛, պապի։ Թոռնիկիդ համբուրիր։

Տիմկան տիկնիկից հոտ է քաշում, իբր թե համբուրում է։ Իսկ Ոլյան մի ուրիշն է բերում։ Յերկար ժամանակ խաղում

եր։ Հայրիկն արթնացավ, նայեց, չմուշկ-ներին ու վոնց ձայնը գցեց.

— Մայրիկ, ուր է քո մեքենայի յուղը։

Մայրիկը սրվակով մեքենայի յուղը բերեց։ Հայրիկը յուղը կաթեցրեց պտուտակների վրա, և պտուտակները պտրտվեցին։

— Ըհը՛, չմուշկներդ արդեն պատրաստ են, ինչ պակաս են։

ՈԼՅԱՆ ՉՄՈՒՇԿՆԵՐՈՎ

Առավոտյան Ոլյան հայրիկին զարթեցրեց։

— Հայրիկ, չմուշկ խաղանք։

— Միշային խնդրիր,—ասում է հայրիկը,— յես աշխատանքի պիտի գնամ։

— Ինչու ճիշտ չես ասում, դու հիմա յերեկոներն ես գնում։

— Մեր գործարանը նոր մեքենա յեն բերել,—ասում է հայրիկը,—տեղը պետք է դրվի, յես ել պետք է այնտեղ լինեմ։

— Բոլորովին նոր, վորից դեռ չի՞ յեղել։

— Այո։

— Լավ, գնա,—և Ոլյան հոգոց հանեց։

Հետո վալենկաները հագավ, մուշտակը հագավ ու գնաց վերև՝ Միշայի մոտ։

Միշան թեյ եր խմում ու գիրք կարդում։

— Մի՛շա, գնանք չմուշկ խաղանք։ Հայրիկս ինձ համար չմուշկ ե մաքրել։

— Ցեգոր պապի՛ն խնդրիր, — ասում ե Միշան, — յես ժամանակ չունեմ, դպրոց պետք ե գընամ։

Ոլյան տուն ե գնում, լվացվում, թեյ խմում, հագնըվում ու չմուշկներն առնում-գնում ե Ցեգոր պապի մոտ՝ պահակատուն։ Իսկ Ցեգոր պապը մորաքույր Կատյայի վալենկաներն ե կարկատում։ Շտապում ե։

— Գնա Լենա Նեստերովայի մոտ,—ասում ե Ցեգոր պապը։—Նա յերեկոյան ե սովորում, իսկ հիմա տանն ե։ Նրա հետ ել չմուշկ կըխաղաս։

Ոլյան գնում ե Լենայի մոտ, իսկ Լենան ճաշի համար կարտոֆիլ ե մաքրում։

— Լենա, գնանք չմուշկ խաղանք։ Ա՛յ, հրես։

— Յեկ ոգնիր՝ կարտոֆիլը մաքրենք,— ասում է Լենան։—Մաքրենք պրծնենք, կգընանք։

Կարտոֆիլը մաքրում պրծնում ու գընում են բակը։

Լենան Ոլյայի աջ վոտքի չմուշկը հագցրեց, կապեց ու ասաց.

— Դե՛հ, խաղա։ Մի վոտքիդ վրա վազիր, իսկ մյուսի վրա խաղա։ Մի վոտքիդ վրա խաղալը վոր սովորեցիր, մյուս չմուշկն ել կկապեմ։

Ոլյան կանգնեց շավղի վրա։ Շավիղը սառցից է, կոկ, իսկական չմուշկ խաղալու համար։ Ոլյան կանգնել է չմուշկի վրա, մյուս վոտքով հրում է, բայց առաջ չի գնում ու չի գնում։

— Լենա, մյուս չըմուշկը հագցրու։ Մեկից բան դուրս չի գալիս։

— Գնա, Ե՛ն,—ասում է։—Ցերկուսից իսկի բան դուրս չի գա։

— Չէ՛, դուրս կգա։

Լենան մյուս չմուշկն է կապում։ Ոլյան կանգնում է շավղի վրա,—բայց տեղից չի շարժվում։ Չմուշկները ծալվում, լխլխկում են։ Մեկ էլ տեսար վայր ընկար ու վոտքերդ փռեցիր։

Ոլյայի մայրիկը դուրս յեկավ պատշգամբ։

— Վա՛յ, Լենա, Լենա։ Չես կարողանում Ոլյայի հետ չմուշկ խաղալ։ Դե տես՝ հիմա մենք վոնց ենք խաղալու։

Մայրիկը Ոլյայի ձեռքերից բռնեց-քաշեց դեպի իրեն։ Ոլյան սահեց։ Մայրիկը յետ-յետ է գնում, իսկ Ոլյան առաջ է սահում։

Հայրիկն աշխատանքից յեկավ։ Նոր սահնակ բերեց։

— Ե՛հ,—ասում է,—դու և Ոլյան չեք կարողանում չմուշկ խաղալ։ Ո՛ւյա, բռնի՛ր սահնակից։ Պի՛նդ բռնիր ու վոտքերիդ վրա պի՛նդ

կանգնիր։ Վոտքերդ դիր իրար կողք ու կանգ-նիր։

Հայրիկը սահնակը սահեցրեց, Ալյան էլ սա-հեց։ Ինչքան էլ արագ։ Յեթե հայրիկը սահ-նակն առած չլիներ, բան դուրս չեր գա։

ԾԻՏԻԿԸ

Ալյան ու մայրիկը փողոցով գնում էին։ Պարզկան այնպես էր, վոր պահ, պահ, պահ։ Նույնիսկ միլիցիոներն էլ գլխարկի տակից գործած ու ականջավոր մի գդակ էր դրել։ Մայրիկն Ալյայի գլուխը տաք թաշկինակ էր փաթաթել, միայն աչքերն էին յերևում։

— Վազիր, Ալյա, կտաքանաս։

Հանկարծ ճանապարհին մի փոքրիկ գունդ է յերևում։ Ալյան մոտ է վազում—ծիտիկ է։ Փետուրները բիզ-բիզ, վոտքերը փորը քաշած, աչքերը խուփ՝ ընկած է։

— Մայրիկ, մեռած թռչուն է։

Մայրիկը մոտեցավ։ Ծիտիկին վերցրեց, նայեց։

— Սառել է, յերևի։

— Տանենք տուն։

— Տանենք։

Ծիտիկին տուն տարան, դրին մի տուփի մեջ, բամբակով փաթաթեցին։

— Մայրիկ, նա մեռած է։

— Ուրեմն մեռած է։

— Վայ ափսոս։

Ույան մի քիչ նստեց սեղանի մոտ ու շարունակ ծիտիկին էր նայում։ Քունը տարավ։

— Պառկիր, Ույա։

— Բա ծիտիկը մենակ պետք է մնա։

— Ի՞նչ պետք է լինի վոր։ Մենք կատու չունենք, ուրիշներին էլ Տիմկան չի թողնի։

Ույան պառկեց քնելու։

— Ծիտիկին լավ պահիր,—ասում է Տիմկային։

Յեվ քնեց։

Առավոտյան զարթնեց, վազ տվեց Ժիտիկին տեսնի։ Բայց տուփի մեջ միայն բամբակն եր մնացել։

— Հրեն քո Ժիտիկը, — ցույց է տալիս մայրիկը դեպի պահարանը, — տաքացել է։

Ուլյան նայում է պահարանին — Ժիտիկը կենդանի նստած է պահարանի գլխին։

ՈԼՅԱՆ ԴԱՀՈՒԿՆԵՐՈՎ

— Ո՛լյա,—ասում է Միշան,—յեկ դահուկներով ման գանք։

— Վռնց։

— Կանգնիր հետս։ Հրեն քեզ համար յես յերկրորդ ոտեր եմ շինել։ Վոտքերդ անցկացրու այդ ոտերի մեջ։ Անցկացրիր։ Ինձ պինդ բռնիր։ Բռնե՞լ ես։ Ա՛յ, յես այս վոտքով կշարժեմ, դու էլ այս վոտքով շարժիր։ Ա՛յ, յես սրանով, դու էլ դրանով մյուսով։ Մեկ—ա՛յ, սրանով, յերկու—ա՛յ, դրանով։ Դե՛հ, գնացինք։ Մեկ, յերկու։ Մեկ, յերկու։

Յեվ իսկապես՝ գնում են։

— Մայրիկ, յես դահուկներով գնում եմ։

— Գնա՛, գնա՛, բայց վայր չընկնես։

Հանկարծ, վորտեղից-վորտեղ — Տիմկան։ Մոտ ե վազում և ծլը՛նգ՝ դահուկների վրա։ «Ցես ել, ասում ե, ձեզ հետ ուզում եմ սահել»։

— Տիմկա, մի՛ խանգարի։

Բայց նա արդեն չկա, վայր ե ընկել։

Առաջ են գնում, իսկ Տիմկան դարձյալ պատրաստվում ե ծլնգալու։

— Տիմկա, մի՛ խանգարի։

Ույան ուզեց նրան վռնդել, բայց ինքն ել վայր ընկավ։

— Սպասի՛ր,— ասում ե Միշան,— հիմա Տիմկային ել տեղ կանենք։

Տուն վազեց, մի արկղ բերեց, պարանը գցեց արկղին ու ծայրը կապեց Ույայի վոտքին։ Տիմկային նստեցրեց արկղի մեջ։

— Նստի՛ր։

Կանգնեց դահուկներին ու նորից գնացին։ Միշան առջևից, Ույան նրա հետևից, իսկ Տիմկան բոլորից

Միշան առջևից, Ալյան նրա հետևից, իսկ Տիմկան բոլորից հետո՝ արկղի մեջ

հետո՝ արկղի մեջ, Ուլյային պարանից թափ է տալիս ու տալիս։

— Ի՞նչ ես թափ տալիս, ե՞։

Իսկ նա ելի թափ է տալիս ու տալիս։ Ուլյան յետ է նայում, մեկ—ու վայր է ընկնում։ Իր հետևից քաշում է Միշային, ու նա ել է վայր ընկնում։ Մենակ Տիմկան է մնում արկղում նստած և իրեն լիզում։

ՏՈՆԱԾԱՌԸ

Ալյան ու հայրիկը գնում են Կոլյա քեռունց մոտ։ Նա քաղաքից դուրս է ապրում։ Ցերկաթուղով կես ժամ ճանապարհ պետք է գնան։

Նստում են մանկական վագոն։ Պատերին նկարներ են կախ տված, առաստաղից՝ տիկնիկներ, արջուկների ու թռչունների խրտվիլակներ։ Գնացքը շարժվում է, և այս բոլոր բաները ոռոմվում են այս ու այն կողմը։



Վագոնների ում ապրանք մանածող կանանցից հայրիկն Ալյայի համար գաթա, միջով ու շաքարեղեն առավ։ Ալյան ուտում է ու լուսամուտից նայում։ Իսկ լուսամուտից դուրս

տոնածառեր են վազում, վազում ու վազում։ Շատ։ Ուղիղ, խիտ, ձյան մեջ։

— Հայրիկ, յեկ տոնածառ այստեղից կըտրենք,—ասում է Ոլյան։ Հրեն, ինչքան կա։ Կոլյա քեռունց մոտ գնալու ել ինչ կարիք կա։

— Այս տոնածառերը դիտմամբ են տնկել, վոր ձյունը ռելսները չծածկի։ Քամին դաշտից ձյունը կքշի, տոնածառերի մոտ կհավաքի, իսկ տոնածառերը չեն թողնի առաջ գնա։

Հասնում են քեռի Կոլյայենց տուն։ Նրա դռան վրա կողպեք է դրված—տանը չի։

Դռան պստիկ պատշգամբի մոտի ճնակույտի մեջ մի տոնածառ է տնկված. կլոր, խիտ, լավ։ Ավելի լավ, քան յերկաթգծի վրայի տոնածառերը։



Հայրիկն ու Ոլյան գնում են քեռի Կոլյայի հարևանների մոտ բանալին ուզելու։

Հանկարծ քեռի Կոլյան ինքն է դուրս գալիս դեմները։

— Ինձ շատ եք սպասել,—հարցնում է։— Ցես նավթի եյի գնացել։

Դուռը բաց արեց։ Ներս մտան, հանվեցին։ Սկսեցին թեյ խմել։ Թեյը վերջացրին, իսկ Ոլյան հարցնում է.

— Տոնածառ կտրե՞լ ես։ Բա ո՞ւր է։

— Տոնածառը պատրաստ է,—ասում է քեռի Կոլյան։— Հրես վոր պատրաստվեք գնալու, քո տոնածառը քեզ կտամ։

Ոլյան ամբողջ սենյակն աչք՞ածեց, խոհանոց գնաց։ Վոչ մի տեղ տոնածառ չկա։

— Վոչ մի տեղ չկա...Տոնածառը, գուցե, անտառո՞ւմ է մնացել։

— Անտառում ինչո՞ւ պետք է մնա, յեթե կտրված է։ Այստեղ է, մի՞ անհանգստանա։ Դու կողքովն անցել, բայց՞ չես տեսել։

Ոլյան նորից գնաց փնտրելու, բայց ելի վոչ մի տեղ չկա։ Իսկ հայրիկն ու քեռի Կոլյան խոսում և նրա վրա ուշք չեն դարձնում։

Ոլյան նստում է աթոռի վրա և ինքնիրեն ուռում։

Քեռի Կոլյան նայում է նրան, ձեռքից բռնում—տանում է լուսամուտի տակ և ցույց տալիս այն տոնածառը, որ դռան պատշգամբի մոտ է։

— Այդ մեր են,—զարմանում է Ոլյան։— Այդ յոլը ես տնկել։ Ամառը յեկա, չկար։

— Չե՞ որ յես քեզ ասացի, թե անտառից եմ կտրել։ Յեվ ահա տնկել եմ ձնակույտի մեջ, որ թարմ մնա, մինչև գալդ չչորանա։

Պատրաստվեցին տուն գնալ, հագնվեցին։ Քեռի Կոլյան տոնածառը ձնակույտից հանեց, տոպրակի մեջ դրեց ու տոպրակը կապեց։

— Հրես քո տոնածառն ել է հագնված։ Այսպես ավելի հարմար կտարվի։ Չեք կոտրի։

Տոնածառը տուն բերին։ Տարան սենյակ, տոպրակից հանեցին, ուղղեցին ու դրին ջուր լցրած դույլի մեջ, որ յերկար ժամանակ կանաչ մնա։ Յեվ սկսեցին տոնածառը զարդարել։

Զարդարեցին, մոմերը կպցրին։ Միշային ու Լենային կանչեցին։ Մոմերը վառեցին։ Հայրիկն սկսեց հարմոշկա նվագել, ու պարը բոլորեց։

Ցերեխաները թրուշկոտում են, Տիմկան էլ նրանց հետ։ Հաջում, ուրախանում է։

Առավոտյան Ոլյան զարթնում, տեսնում է՝ սոնածառի վերևի ճյուղերը շարժվում են։ Ծխին և ճյուղից-ճյուղ ցատկում։ Ցատկոտում է ու ծլվլում։

ՆՈՐ ՏԱՐԻՆ

— Վեր կաց, Ո՛ւյա,—զարթեցնում է մայրիկը,—նոր տարիդ յեկել է։ Վեցերորդը։

— Բոլորովին նոր,—հարցնում է Ուլյան։—Յերեկ չկար։

— Չկար։

— Յերբեք չի յեղել։

— Յերբեք։

Այ հետաքրքիր բան։ Ուլյան աչքի մեկը բաց արեց ու նայում է. այսպես ել նոր

տարի։ Պահ, ինչ փայլուն է։ Մարդ կարող է կուրանալ։ Բոլոր բաներն ասես մաքրել են։

Վառարանը փայլում է, կամոդը փայլում է, առաստաղը փայլում է, հատակը փայլում է, նստարանի կոնքը փայլում է, մի՞չի՞ Ջուրն էլ է փայլում... Իսկ լուսամուտից դուրս թե ինչ է կատարվում, պատմելու բան չի։ Ձյան ամեն մի փաթիլը ցոլցլում, շողշողում է։

— Ինքնայեռը յեռում է,—դռնից ձայն տվեց մորաքույր Կատյան.—Նրա ձայնն էլ պայծառ է, զրնգան, նոր։

Ոլյան վեր է կենում և սկսում է ամեն ինչ նայել—նոր է, թե՞ նոր չէ։ Ահա գավաթը։ Պռունգը դեռ յերեկվա տարին է թռել, բայց ինքն ելի հենց նոր է։ Նույնիսկ նրա վրայի ծաղիկն էլ կարծես մեծացել է։ Բացվել է։

Ահա մկրատը։ Ծայրերից մեկն առաջվա պես ծալված է։ Բայց թե ինչ փայլուն է, ասես հայելուց լինի։ Ահա թաթխոցը վառարանի մոտ լարանով կախ է տված պատից։ Այն էլ է նոր։ Պինդ-պինդ, չոր-չոր քամած է և ուրվում է։ Ոլյան պարանից բռնեց, քաշեց դեպի իրեն ու բաց թողեց։ «Գը՞մ...» յերգեց պարանը, իսկ թաթխոցը թռավ ընկավ հատակին ու մի անգամ էլ հատակին վեր թռավ։

— Ի՞նչ նոր «նոր տարի» յե,—զարմանում է Ալյան ու մտնում մահճակալի տակ՝ հին տիկնիկը փնտրելու։ Տիմկան տիկնիկը կրծել ու պահել է։ Յեթե տիկնիկն ել է նորացել, ուրեմն, յերեկվա տարուց բան չի մնացել, ամեն ինչ նորացել է։

Ալյան մտավ մահճակալի տակ, իսկ այնտեղ փոշի անգամ չկար, ուր մնաց թե տիկնիկ։ Մահճակալի տակ հատակը նոր է, մաքուր։ Ալյան մահճակալի տակից դուրս յեկավ, վոտքի կանգնեց, և ի՞նչ. տիկնիկը նստած է լուսամուտին՝ ծաղկամանի մոտ։ Տիկնիկի գլուխը պտավոր թաշկինակ է կապած, իսկ մեջքին՝ յերիզ։ Աչքերը նոր են, կլոր, սև։ Բերանը՝ սիրունիկ։ Վոտքերը կարկատված են։ Ամենից նոր տիկնիկն է դարձել։

Ալյան տիկնիկը վերցրեց գնաց հայրիկի մոտ։ Իսկ հայրիկը նոր

շապիկ հագած՝ լուսամուտի մոտ նստել է աթոռին, նայում է հայելուն ու սափրվում է։ Հայելու մեջ Ալյային տեսավ ու սկսեց ծամածռություններ անել։ Ինքն ոճառի մեջ կորել է, ծիծաղելի բան է դարձել։

Ածելին գնդում, ցուցլում ու շողքը գցում է առաստաղին։ Հայրիկը սափրվում վերջացնում է ու ասում.

— Հապա, Ա՛լյա, գնանք-տեսնենք. նոր տարուն դու յերկարացել ես, թե՞ կարճացել։

Ալյան կանգնում է դռան շրջանակի մոտ, կղակը բարձրացնում ու չի շարժվում։ Հանկարծ կարճացավ։

Հայրիկը քանոնը դրեց նրա գագաթին ու մատիտով խաղեց։

— Տե՛ս՝ ինչ ես դարձել։

Ալյան նայեց։ Հրե՛ն անցյալ տարվա խազը, հրես այս տարվանը։ Պահ, ինչքան բարձր է։ Այսպես յերբեք չի յեղել։

Բակից ներս վազեց Տիմկան, սկսեցին նրան ել չափել։ Հետևի թաթերի վրա կանգնեցրին ու չափեցին։ Նա ել ե յերկարացել։

Ույան տիկնիկը նստեցրեց Տիմկայի վրա, իսկ նա տիկնիկը հնպ արեց— ու մահճակալի տակ։ Թագցրրեց, հետ դարձավ և ըսկըսեց իր թասից ջուր լակել։

— Տիմկա, տիկնիկը բեր։ Ա՛յս ըոպեյիս բեր։

Իսկ նա տեղից չի շարժվում։

Ույան ինքն ե մտնում մահճակալի տակ տիկնիկը բերելու։

Տիկնիկը յերեսի վրա, ձեռքերը փռած՝ ընկած ե մահճակալի տակ։ Տիմկան վազում, ուզում ե տիկնիկը խլել, բայց Ույան նրան վռնդում ե։

— Կորի՛, կորի՛։ Ձեմ ուզում յերեսդ տեսնել։ Ամեն ինչ նորացել ե, մենակ դու նոր չես։ Ինչպես անտանելի ե յիր, այնպես ել մնացել ես։

ՍԱՐԸ

— Ո՛ւյա, Ո՛ւյա,—կանչում է Միշան։— Գնանք սար շինելու։

Միշան թիակը դրել է ուսին, յերկար վալենկաները քաշել վոտքերը և ականջավոր գդակի ականջները բաց թողած՝ ճխտել գլուխը։

Նա գնում է առջևից, նեղ շավղով, վոր դեռևս յերեկ եր տրորել։ Ույան կամացուկ հետևում է նրան։ Քայլել շատ անհարմար է։ Նեղ է, ձյունը լցված, փոս-փոսի հետևից։ Յերկու կողմից ճնակույտեր են։ Բռնելու բան էլ չկա։ Ույան պտույտ-պտույտ է անում, ձայն չի հանում, միայն ֆսֆսում է։

— Յեկ, յեկ,—հանգստացնում է Միշան,— հրես մոտ է։

Վերջապես հասնում են։ Հրեն հորը, որից ամառը ջուր են վերցնում, որ բանջարանոց ջրեն։ Բոլորովին լցվել, սպիտակ է։ Միայն յերկաթե խողովակն է սևին տալիս։

— Այստեղ մի փոքրիկ բլուր կա,— ասում է Միշան,— հրես կը-սահենք ներքև՝ ուղիղ ցանկապատի մոտ։ Սար կդիզենք, վրան ջուր կցանենք։ Կդառնա կոկ, սոթլիկ։

Միշան սկսում է ջրհորի մոտ մի խոր ճամբա փորել։ Փորում ու ձյունն իրար վրա յե հավաքում։

Մոտ են վազում յերեխաները՝ փոքրիկ Կոլյան, Պետյան, Սերյոժան, նույնպես թիակներով։ Սկսում են չորսով ել ձյունը գցել։ Կույտը շուտով բարձրանում, լայնանում, իսկական սար է դառնում։

Սկսում են սարը կարգի բերել՝ կողքերը հավասարեցնել, գլուխը կոխկորճել։

— Ո՛ւյա, բարձրացիր գլուխը։ Դու բոլորը կտեսնես, մեզ ել չես խանգարի։ Թե չե՝ մեկ ել տեսար վայր գցեցինք։

Ուլյային նստեցնում են սարի գլխին։

— Կանգնիր, մի վախենա, չես թաղվի։ Զյունը պինդ է, տրորած։

Ուլյան ծնկների վրա բարձրանում է, հետո ուղղվում։ Ինչ բարձր է։ Նույնիսկ՝ սարսափելի։ Բռնելու տեղ էլ չկա։

— Միշա, յես նրատում եմ։

— Լավ, նստիր, միայն վոտքերդ քեզ քաշիր, վոր թիակը չդիպչի։

Ուլյան պուպուզ նստում է։ Յերեխաները սկսում են սարի վրա զառիվայր շինել։ Զյունը հավաքում, թիակով տրպտրպում են։

Զառիվայրը պատրաստում, սկսում են փոքրիկ ճանապարհ տրորել—պընդացնել։

— Ըհը՛, արդեն պատրաստ է,—գոչում է Միշան։—Իջիր, ջուր պիտի ցանենք։

Ոլյան ուզում է ծնկները բանալ, չեն բացվում. շատ է նստել։

Անշնորհք—ասում է Սերյոժան։—Կողքիդ վրա ընկիր, ձեռաց կբացվես։

Ոլյան կողքի վրա յե ընկնում, իսկ Սերյոժան նրան՝ հոպ—բռնում, ներքև է քաշում։ Ոլյան վախենում է, սկսում է քացի-քացի անել, ու ծնկները մեկեն բացվում են։

— Գնանք դուլլ բերենք,—ասում է Միշան,—կբացվես։

Նորից Միշայի կոխկորտած տեղով են գընում։ Գնում են, գնում։ Դուրս են գալիս մի պինդ ու լայն շավիղ։ Ոլյան ուրախանում է ու վազ տալիս տուն։

— Մայրիկ, կաթի ամանը տուր։ Ցես Չուր պիտի լցնեմ։ Սարը Չրենք։

Ոլյան կաթի ամանը վերցնում, իր ձեռքով դնում է ծորակի տակ ու բերնե-բերան Չուր լցնում։ Մինչև ծորակը փակելը Չուրը պռունգներից թափվում է։ Մայրիկը միքիչ թափում է, վոր Չուրը չղճփա, ու ամանը տալիս է Ոլյային։

Ոլյան ամանը տանում է դեպի սարը։ Իսկ այնտեղ արդեն սարը ջրում են։ Դուլլով կժով, ինչով պատահի։

— Ա՛հ,—ասում է Միշան,—թող սառի։ Իրիկունն ելի ջուր շաղ կտանք։ Իսկ վաղը կտահենք։

ՍԱՀՆԱԿՈՎ

Մյուս որն Ալյան նոր եր թեյի նստել, Միշան լուսամուտը ծեծում է։ Ձեռքերով ինչ-վոր բան է ցույց տալիս։ Հասկանալ չի լինում։

Մայրիկը փեղկը բաց է անում, և նա ձայն է տալիս։

— Թող գա, սարից սահելու յե գալիս։

Ալյան թեյը խմում, հագնվում, դուրս է գալիս։ Իսկ Միշան ու իր ընկերները սարից արդեն սլլում են։

— Ցե՛կ,—կանչում են,—շուտ-շուտ յե՛կ։ Ա՛յ, ապրես։ Ա՛յ, այստեղ, աստիճաններով։ Ձեռքդ տուր տեսնեմ։

Նրան քաշում են վերև։ Նստեցնում են Սերյոժկայի հետևը։

— Նրա գոտուց բռնի՛ր։

— Մե՛կ։ Ուղի՛ղ ներքև... Ուզում եր ճչալ, ժամանակ չունեցավ։ Արդեն շավղով են

սահում։ Մի շավղից մյուսն են թռչում ու չլ՛ոպ՝ ցանկապատին։ Նստիր,—ասում է Սերյոժկան,—յես քեզ յետ կտանեմ։

Վազ է տալիս։ Իսկ դեմ առ դեմ գալիս են Միշան ու փոքրիկ Կոլյան։ Նրանցից հազիվ թեքվեցին ձյան մեջ։

Անխելքներ, — գոռում է Սերյոժկան։— Հարկավոր է սպասել։— Յեվ առաջ է վազում,

Սահնակը քաշում հանում է սարի գլուխը։ Նորից են նստում։

— Հե՛յ, ճանապարհ, յեկանք, հա՛։

— Մե՛կ։ Ուղի՛ղ ներքև... Սահում են մինչև ցանկապատը— դրե՛մփ։ Ու ելի յետ։

Հարևան բակից մաղը ձեռքին այստեղ յեկավ Միսկան։ Բարձրացավ սարը, նստեց, մաղի մեջ, վոտքերով հրեց—ու դեպի ներքև։ Դուրս յեկավ ճանապարհի վրա ու թեքվեց։

— Գնա, է,—ծիծաղում է Միշան։— Մաղով ել չես կարողանում։ Դե տես՝ յես վոնց եմ առանց այդ բոլորի։

Տեղերը հավաքեց, նստեց սառցի վրա, վոտքերը լայն չռեց ու սահեց։

Մինչև յերկրորդ շավիղը սահում է, և առաջ գնալու էլ ուժ չի մնում։

— Սահնակով ավելի լավ է։

Իսկ Միտկան մաղը դեն է գցում, բարձրանում է սարի գլուխը, դրե՛մ փ՝ փորի վրա ու սահում։

Հետո վազ է տալիս տուն՝ սահնակը բերելու, և քրոջը՝ Լիզային կանչելու։ Լիզային սահնակով բերում է, հետևիցն էլ մեծ յեղբայրն է չմուշկներով գալիս։ Առանց չմուշկները հանելու բարձրանում է սարն ու սարից՝ ներքև։ Ա՛յ, ինչ եմ ասել։ Սահնակից լավ է։

Հետո յերկու աղջկան էլ նստեցնում է սահնակին։ Ինքը կանգնում է հետևն ու պարանն առնում ձեռքը։ Այդպես էլ միասին ներքև են սահում։

Իսկ Լիզան ասես լարված լինի «յա, յա, յա, յա»—ձայն է տալիս։

— Դու ինչու յես գորգոռում, Լիզա։

Իսկ նա բերանը լայն բացարած ծիծաղում է.

— Լավ է։

Իսկ նա ծափ է տալիս։ Ուրեմն լավ է։

Ոլյան լսում է, վոր տպակին ծեծում են։ Նայում է դեպի լուսամուտը. լուսամուտի մեջ մայրիկը բռնել է Տիմկային Տիմկան ուզում է նրա ձեռքից պոկվել։ Ուզում է սահել։ Մոտ է վազում։ Սկսում են նրա հետ սահել։

Բոլորից առաջ Տիմկան նրանից հետո՝ Լիզան նրանից հետո՝ Ոլյան, իսկ բոլորից հետո՝ չմուշկներով Լիզայի յեղբայրը։ Ինչ ուրախ է։

Մոտ է վազում Տիմկան, սկսում են նրա հետ սոթ տալ։

ԲԵՐԴԸ

Ոլյան Տիմկայի հետ բակից դուրս յեկավ փողոց։ Նրանց փողոցը մի ուրիշ փողոց է։ Այդտեղից կառք համարյա չի գնում, վորովհետև միայն մի կողմի վրա կարելի յե գնալ։ Մյուս կողմից գետակն է։ Գետակի վրա կամուրջ չկա։ Ուրեմն գնալ ել չի կարելի։

Ոլյայենց տունը փողոցի ամենավերջինն է։ Այն կողմը բանջարանոցներն են։ Փողոցի գլխին շարունակ յերեխաներ են խաղում։

Ա՛յ, հենց հիմա ել այնքան են հավաքվել, վոր հաշիվ չկա։ Նրանք ձյունից տուն ել են շինել։ Քանի ուժ ունեն, գոռում են։ Վազվզում, իրար են դիպչում։ Յերեխաների մի մասը ձյունե պատի հետևն իրար գլխի յեն հավաքվել, մյուս մասը նրանց վրա յե հարձակվում։

— Տիմկա,—կանչում է Ոլյան,—կռիվ է։

Տիմկան հաջում, հարձակվում է յերեխաների վրա, Ոլյան ել՝ նրա հետևից։ Դեռ տեղ չհասած, շը՛պ՝ մի գունդ ձուն նրա կրծքին։ Ոլյան կանգ է առնում, շը՛պ՝ մի ուրիշ ձնագունդ։ Տիմիկան տեսնում է, վոր իր տիրուհուն նեղացնում են, հարձակվում է տղաներից մեկի վրա, կախ է ընկնում նրա մուշտակից ու բաց չի թողնում։

— Գերի՛ն, գերի՛ն,—ձայն են տալիս չորս կողմից։—Տեսա՛ր, Տիմկան։ Գերի յե վերցրել։

Այն տղային, վորի մուշտակից Տիմկան կախ եր ընկել, բռնեցին մի կողմ տարան։

— Դու մե՞ր կողմն ես լինելու,—հարցնում են,—թե՞ նրանց։ Յեթե նրանց կողմն ես, մենք քեզ կբանտարկենք։ Յեթե մեր կողմն ես, մեզ հետ բերդը կվերցնես։

— Ձեր կողմն եմ, ձեր,—գոչում է գերին։

— Տիմկա, դրան բաց թող, նա մեր կողմից է։

Տիմկան տղային բաց թողեց և ուրախ է։ Թռչկոտում, պոչը շարժում է։

Հանկարծ, վորտեղից-վորտեղ, յերկու տղա հարձակվեցին Ալյայի վրա։ Ոտաբոսներ՝ բերդից։ Բռնում ու քարշ են տալիս իրենց կողմը։ Տիմկան ել նրանց հետևից։ Մուշտակը բռնել ու կախ է ընկել։

— Դու մեր կողմն ես, թե՞ նրանց,—հարցնում են ոտաբ տղաները Ալյային։

— Վոչ, նրանց կողմը,—պատասխանում է Ալյան ու աշխատում նրանց ձեռքից դուրս պրծնել։

— Դեհ, գնա, բանտարկված ես։

Ալյան այնպես է ճչում։ Տիմկան կատաղում և տղաներից մեկի ձեռքը բռնում է։

— Տես, ե՛ս,—բղավում է տղան։—Ցես հիմա քեզ ցո՛ւյց կտամ։

Ուզում է Տիմկային խփել, Ալյային է ձեռքից բաց թողնում։ Իսկ Ալյան յետ է դառնում դեպի ընկերները։ Տիմկան էլ նրա հետևից։

Ոտար յերեխաներն ընկնում են հետևից, բայց Տիմկայից վախենում են։ Տեսնում ես վոնցն է։ Կասես գայլ լինի։ Կատաղել է, և մազերը բիզ-բիզ կանգնել են։ Փորձիր մոտ գնալ միայն։ Իրենց տղաները ժամանակ չեն կորցնում։ Խմբով վազ են տալիս դեպի բերդը։ Թռչում են պատի գլուխը։

— Ուռա՛,—կանչում են,—մենք հաղթեցինք։ Հանձնվեցի՛ք։

Իսկ նրանք գոռում են.

— Այդ սխալ է։ Մենք պայման չենք կապել, վոր շան հետ կռիվ անենք։ Նա վոր չլիներ, միամիտ կաց, չեյինք բռնվի։

— Դե լավ,—ասում են,—յեկեք մեզ վրա։ Այդպես ավելի ուրախ է։ Ո՛ւյա, մեզ մոտ յեկ, մեզ մոտ։

Տիմկայի հետ մտան բերդը։ Դե, հիմա բռնիր նրանց։ Տիմկան այնպես է վրա հասնում, այնպես է կատաղում։ Հենց ուղղակի քթից է բռնում։

— Մենք այդպես համաձայն չենք։ Տեսնում ես ինչ խորամանկն են։ Ուլյային տվեք մեզ, այն ժամանակ կտեսնեք։

Տղաները սկսեցին վիճել։ Վիճեցին, հա վիճեցին։ Իսկ Տիմկան ինչ-վոր մի կատու տեսավ։ Բերդից դուրս պրծավ՝ ու նրա հետևից։ Են տեսնելն եր, վոր նրան տեսան։

Իսկ առանց Տիմկայի խաղալն անհետաքրքիր դարձավ։ Ուլյան վազ տվեց տուն։

ՎՈԶՆԻԿԸ ՔՆԱԾ Է

Ոլյան մայրիկի հետ մի անգամ էլ գնաց մորաքույր Կլաշայի տուն։ Իսկ նրա մոտ նորություն՝ վոզնիկը քնել է։ Այ քեզ նորություն։ Ի՞նչ զարմանալու բան կա։ Նա անցյալ անգամ էլ քնած էր։ Բոլորն էլ կարող են քնել։

— Իսկ դու ինչքա՞ն կարող ես քնել,— հարցնում է մորաքույր Կլաշան Ոլյային։

— Վո՞նց թե ինչքան։ Իրիկունը կքնեմ և առավոտը կզարթնեմ։

— Իսկ ավելի կարո՞ղ ես քնել։ Իրիկունը քնես, գիշերը քնած մնաս, ցերեկը քնած մնաս և զարթնես այն ժամանակ, յերբ նորից իրիկուն է։ Կարո՞ղ ես։

— Յերբ հիվանդ եյի, կարողանում եյի։

— Իսկ յերբ առո՞ղջ ես։

— Չեմ փորձել։

— Իսկ կարո՞ղ ես ամբողջ ձմեռը քնած մնալ և միայն գարունը զարթնել։

— Վոչ։ Այդպես վոչ մեկը չի կարող քնած մնալ։

— Իմ վոզնիկը կարող է։ Ուրիշ ամեն մի վոզնի ել կարող է քնած մնալ։ Կկծկվի, մի գունդ կդառնա ու կմնա քընած։ Վոչ ուտում է, վոչ խմում, վոչ տեղից շարժվում—քնում է։

— Գուցե նա մեռել է։

— Յեթե մեռած լիներ, կբացվեր։

— Յես մի կամացուկ-կամացուկ մտիկ տամ։

— Չես կարող տեսնել։ Նա այնպես է կուլվել իր անկողնի մեջ՝ բամբակի ու լաթերի մեջ, վոր վոչ մի կերպ չես կարող բաց անել։ Միայն ինքը կարող է բացվել։

Ուլյան նայեց բուֆետի հետևը։ Ճիշտ է, միայն լաթերն են գունդ վայր ընկած։

— Բո կատուներն ճել են քնում.

— Վոչ, նրանք այդքան չեն կարող քնել։ Մի գազան էլ կա, վոր կարող է այդպես, քնել,—արջը։

Ուլյան մտածեց, մտածեց ու ասաց.

— Ի՞նչ ձանձրալի յե։

— Դու էլ գնդակ խաղա։

— Վոչ, այդքան յերկար քնելն է ձանձրալի։ Ուրեմն նա բոլորովին-բոլորովին չգիտե՝ ձըմեռն ինչ բան է։ Շատ ձանձրալի յե... Մուկը նրանից փոքր է, բայց չի քնում։ Ծիտիկը նրանից փոքր է, բայց նույնպես չի քնում։ Բա նա ինչու յե քնում։

— Ձմեռը չի կարողանում ապրել։ Ձըմեռն ուտելու բան չունի։ Այդ պատճառով էլ քնում է։ Իմ վոզնիկը համ կուշտ է, համ՝ տեղը տաք։ Նա այդպես էլ սովորել է արդեն։

— Ուրեմն նա ուրիշներից ե՞լ քիչ է ապրում։

— Քիչ, քիչ։ Իհարկե՝ քիչ։ Խեղճ վոզնիկ։

Ոլյան մի անգամ ել նայեց պահարանի հետևի լաթերի գունդը ու կպավ մայրիկին։

— Գնանք տուն։

ԲՈՒՔԸ

Այսոր բակը չես գնա։ Ձյուն է գալիս, քամին սուլում է։ Բուք է։ Ձորս կողմը ծածկել է։

Հայրիկը վերադարձավ վոտից-գլուխ սպիտակած։ Մայրիկն ավելը տվեց նրա ձեռքն ու վռնդեց նախասենյակը. թող վրան մաքրի։ Թե չե՝ հատակն էլ կթրջվի, մուշտակն էլ։

Տիմկային բաց թողին զբոսնելու։ Մի բոպե չանցած, սկսեց դուռը ճանկռել։ Ուզում է տուն գալ։ Ներս վազեց ու սկսեց թափ տալ։ Ցայտերը չորս կողմն են թռչում։

— Կորի՛, անպիտան,—մայրիկն սկսում է հայհոյել նրան։—Ամբողջ հատակը թրջեց։

Կորի խոհանոց։ Բայց նրա իսկի պետքն էլ չի։ Միայն ուրախանում է։ Հատակի վրա

վազվզում։

Դուրսը վատ է, իսկ ներսն էլ բքից է մթնել։

Ծիտիկը վորոշեց, վոր արդեն իրիկուն է։ Թռավ պահարանի գլուխը։ Գլուխը դրեց թևերի տակ ու քնեց։

Ալյայի համար էլ ձանձրալի յե։

Տիմկան է միայն ուրա-խանում։ Հատակի վրա լավ վազվզեց, մաքրվեց և սենյակից-սենյակ է թռչում։ Նա իրեն չորացնում է։

— Ի՞նչ է, Ա՛լյա, դու ձանձրանում ես,—ասում է հայրիկը։ Տես, Տիմկան վո՞նց է բացվել։

— Նրա՝ էլ։

— Վոնց թե «նրա էլ»։ Ո՞ւր է քո տիկնասալյակը։ Հիմա մենք նրան կլծենք։ Նրան

գործի կդնենք։ Ինչու յե նա աննպատակ վազվզում։

Հայրիկը մահճակալի տակից սայլակը հանեց, Տիմկային բռնեց ու սայլակը կապեց նրա վզնոցից։

— Ո՛ւյա, Տիմկային կանչիր մոտդ։

Ուլյան կանչեց։ Տիմկան վազեց նրան, իսկ սայլակը հետևից թրռչկոտում ե։ Տիմկան հասավ Ուլյային, հանկարծ հայրիկը ձայն տվեց։

— Տիմկա, այստեղ յեկ։

Նա վազեց դեպի հայրիկը։



Հասավ հայրիկին, Ուլյան կանչեց։ Նա արդեն գլխի ընկավ։ Ինքն ե սկսում առանց կանչելու վազվզել, ինչպես առաջ։ Սայլակը թրչկոտում, թխթխկում ե։

Աղմուկից ծիտիկը զարթնեց։ Սկսեց պահարանի վրա թռչկոտել։ Թռչկոտում ու ծլվլում ե։



Տիկնա, այստեղ յեկ

— Տեսնում ես, ծիտիկն էլ է ուրախացել,— ասում է հայրիկը։ Հրեն, այն էլ արևը։

Ճիշտ է, արևը յերևում էր։ Սկզբից վախվխելով, հազիվ-հազ։ Հետո հանկարծ դուռն պես բացվեց. պայծառ-պայծառացավ։

Ոլյան լուսամուտից դուրս նայեց։ Բակի ծառերն ու թփերը տոն որի պես զարդարվել են։

— Ուզում եմ զբոսնել, զբոսնել։

Հագնվեց, Տիմկային հետն առավ։ Դուրս

յեկավ նախասենյակ։ Ուզում է դուռը բաց անել, բայց չի բացվում. ձյունն առաջը փակել է։ Ոլյան լսում է՝ մեկը պատշգամբը թխթխկացնում, ճանկռում է։ Ձյունն է քերում։

— Մի՛շտ, այդ դռ՛ւ յես։

— Ցես եմ, յես... Հիմա քեզ համար ճանապարհ կբացեմ։

Դուռը բաց արեց։ Ինչ պայծառ է։ Մարդու աչք է կուրացնում։

Ոլյան աչքերը կկոցում, չի կարողանում նայել։ Հաղիվհազ սկսում է աչքերը բաց անել։ Ավելի ու ավելի, և ընտելանում է։

Մաղոր, տաք։ Ծիտիկները ցանկապատի վրա՝ ձյունի մեջ լողանում, ծլվլում են։ Ագռավը գալիս—նստում է ծառին։ Ձյունն ալյուրի պես ծառից ցած է թափվում։

Ոլյան գնում է կրոնելու։ Հանում է հարևանի դռան պատիկ պատշգամբին, ու էլ տեղ չկա. սրբած չի։ Տիմկան ուզեց առաջ ընկնել և թաղվեց։ Դուրս յեկավ ու նորից թաղվեց։ Յետ դարձավ ու սկսեց վրան թափ տալ։

— Դարունը գալիս է,—ասում է Միշան։

— Ինչպես թե դարունը,—զարմանում է Ոլյան։—Բոլորովին ձմեռ է։

— Հրեն, ինչ տաքացել է։ Յեթե վաղը նորից տաքանա, ձյունե մարդ կշինենք։

— Ի՞նչ տեսակ։

— Գլուխ, աչք, քիթ ունեցող։ Ա՛յ, թե ինչ տեսակ։ Ձյունից։

ՁՅՈՒՆԵ ՄԱՐԴԸ

Դուրսը տաք է։ Ցերեկվանից տաք։ Տանիքից Ձրի շիթեր են թափվում, լուսամուտների տակի ձյունի մեջ նրանցից կլոր ծակեր են առաջացել։ Դուռն պատիկ պատշգամբի ձյունը մաքրված է։ Մուգ գույն է ստացել, թաց է։

Միշան ու Պետյան ձյան վրայով մի ահագին գունդ են գլորում։ Գլորում են, և այն ավելի ու ավելի յե մեծանում։ Ձյունը կպչում է նրան։

— Դու այդ ինչ ես շինում,— հարցնում է Ալյան։

— Ձնե մարդ։

— Բա ինչու յեք գլորում։

— Վոր գունդը մեծանա։

Նրանց ուժն այլևս չի պատում գլորելու և նրանք բաց են թողնում։ Միշան մի փոքր գունդ է շինում։

— Հիմա էլ դու գլորիր,— ասում է նա Ալյային, իսկ մենք մի քիչ նստենք։

Ալյան փքվում է։ Ուզում է գունդը շարժել, բայց տեղից չի շարժվում — ասես կպած լինի։

Ալյան գունդը հրում ասնում է կոկ շավղի վրա ու գլորում։

— Անշնո՛ր հ ք,— ասում է Միշան։— Շավիղով գլորելիս չի կպչի։

— Սխալ այնտեղ չի գլորվում,— պատասխանում է Ալյան։

— Միշան վրա յե վազում և գունդը ձյան վրայով գլորում։ Յերկու տակ գլորեց։ Պետյայի հետ վերցրեց դրեց մեծի վրա։ Հետո մի ուրիշ փոքրիկ գունդ էլ շինեցին ու դրին ուղիղ գագաթին։

— Վոտքերը կան, ձեռքերը կան, գլուխը նույնպես,— ասում է Միշան,— հիմա էլ աչքեր շինենք։ Պատշգամբի մոտից յերկու կտոր ածուխ ճարեց, խրեց ձյունե մարդի գլխի մեջ։ Ձյունե մարդն աչքեր էլ ունեցավ։

Պետյան մի հատ լուլա վայր գցեց, կրպ-

ցըրեց աչքերի տակ։ Մարդը քթի՛թ ել ունեցավ։

Տեսնում են, վոր Ոլյան նախասենյակից ծաղկաման ե բերում։ Ծաղկամանը գլխարկի տեղ դնում են ձյունե մարդու գլուխը։ Միշան ձյունե մարդին բերան ե գրծում, բերանը մի ճյուղ ե դնում ու ճյուղին գլանակի մնացորդ հագցնում։

Ձյունե մարդն սկսում ե գլանակ ծխել։

Ոլյան մտիկ ե տալիս նրան ու ասում.

— Ի՞նչ գարշելին ե։ Իմ ծաղկամանը տվեք։ Ցես յետ պիտի տանեմ։

— Կաց, սպասի՛ր,— ասում ե Միշան,—տես՝ թե ի՞նչ եմ անում։

Տուն ե վազում, յերկու հատ հալի փետուր բերում, խրում ձյունե մարդի քթի տակ։ Ձյունե մարդը բեխ ել ունեցավ։

Աչքերը չռվել են, քիթը վեր ե ցցվել։

բեխերն այս ու այն կողմն են գնացել, գլանակն էլ բերին է։

Ձյունե մարդը մի շատ ծիծաղելի բան դարձավ։

Ոլյան կանգնել մտիկ է տալիս նրան ու հրճվում։

Դուրս վազեց Տիմկան։ Հպարտ-հպարտ վրա պրծավ ձյունե մարդուն ու հանկարծ վախեցավ։ Պոչը քաշեց ու յետ փախավ։

Վազ տվեց պատիկ պաղշգամբն ու այնտեղից սկսեց հաչել։

Հաչեց ու հաչեց։ Հանկարծ ձյունե մարդը վոր գլխով չի անում։ Գլուխը գլորվում վայր է ընկնում — ծաղկամանը փշուր-փշուր է լինում։



— Վուշինչ — ասում է Միշան, — ծաղկամանը ծանրություն արեց։ — Հիմա ուրիշ գլուխ կշինենք։

Ուզում էին շինել, բայց նրանց ճաշի կանչեցին։

Այդպես էլ ձյունե մարդն անգլուխ մնաց։

Մորաքույր Կատյայի համար ցախ բերին։ —

Սկսեցին սահնակը դարձնել։ Խփեցին ձյունե մարդուն ու բոլորովին վայր գցեցին։

Ճաշելուց հետո Ալյան դուրս է գալիս զբոսնելու։ Միշային հարցնում է.

— Ձյունե մարդն ո՞ւր է։

Իսկ Միշան ուրիշ գործով էր զբաղվում—բարձրացել էր տանիքը՝ ձյունը քերելու։ Միայն Տիմկան վազ տվեց ձյունե կույտի մոտ, յետ նայեց Ալյային ու պոչը շարժեց։

«Տես, ասում է, թե ո՞ւր է նա՝ ձեր ձյունե մարդը, և բոլորովին զարհուրելի չէ»։

ԳԱՐՈՒՆԸ ԼՈՒՍԱՄՈՒՏԻՆ

Գիշերը սաստիկ անձրև եր գալիս։ Տանիքն այնպես եր թխթխկում, կարծես վրան սահնակ եյին քշում։ Ոլյան զարթնում, զարմանում է։ Մայրիկին զարթնեցնում ու հարցնում է.

— Այն ինչ է։

— Ինչը, ինչը,—ասում է մայրիկը—գարունն է գալիս։ Ձյունն է քշում։

Առավոտյան Ոլյան վեր է կենում։ Լուսամուտից մտիկ է տալիս, բայց քակում հաղիվ-հաղ է ձյուն յերևում։ Առվակներ են վազում, փայլ տալիս։ Ծիտիկները թռչկոտում են։ Միշան մետակ կուրտկայով վազում է՝ յերկաթե մի ձող ձեռքին։

Ոլյան լուսամուտը ծեծում—նրան կանչում է, բայց նա չի ել լսում։ Շտապում է։

Լվացվեց, թեյը խմեց ու դուրս յելավ։ Գետինը սոթլիկ է։ Վազել դժվար է։ Ձյունը

գունդ-գունդ թափված է։ Հին,ծանր։ Սառույցը հաշյայի պես չորս կողմը բռնել է։

Կողերը գետնից պոկվել, հալվել են։ Ամուր խփի՝ կՀարդվի։ Ոլյան կանգնեց պռնգին ու վեր թռավ։ Չե, չի Հարդվի։ Շատ պինդ է։

— Ոլիկ,—կանչում է Միշան թփերի միջից,—յեկ այստեղ։ Տես՝ թե այստեղ վոնց է թռչում։

Իսկ ինքը յերկաթե ձողով թըխկ հա թըխկ։ Այնպես է դղրդացնում, կարծես տաշտի յե խփում։ Ոլյան թփերի արանքով ներս է մտնում։ Միշան կանգնած է սառցե կեղևի վրա։ Ձողով մեկ-յերկու խփում է թե չե, սառույցը ճաքում, մի մեծ կտոր պոկվում է։

Այդպես ել հարկավոր է նրան՝ սառցին։ Ամեռը վերջացել, գարուն է յեկել։

— Գարուն է, իսկ խոտ չկա,—ասում է Ոլյան։

— Դու շատ ես շտապում։ Ձյունը կչքվի, գետինը կտաքանա, ու խոտը դուրս կգա։

Մի իշան գնաց դպրոց։ Ուլյան

Տիմկային առավ, նստեց դռան առաջի փոքրիկ պատշգամբի վրա ու մնաց նստած։

Նստեց, նստեց, հանկարծ Լենա Նեստերովան մոտից անցնում է։

— Ուլյա, եղ ինչու՞ չես նստել։ Գնայիր քեզ համար ման դալու։

— Սպասում եմ, մինչև վոր գետինը տաքանա, խոտը դուրս գա։

— Դու շատ ես շտապում։ Այդքանը մի որվա մեջ չի լինի։ Դեռ ինչքան ձյուն պիտի գա, պարզկա պիտի անի։

Լենան մի փունջ ճյուղ է պոկում ու տալիս Ուլյային։

— Ա՛յ, ա՛ռ։ Մի շշի մեջ ջուր լցրու և ճյուղերը դիր մեջը։ Տերև կտան։ Մեկն ուռենի յե, իսկ ես մեկելը՝ բարդի։ Քեզ համար լուսամուտին գարուն կլինի։ Ավելի շուտ, քան դուրսը։

Ոլյան ճյուղերը տուն տարավ։ Լենայի ասածի պես արեց ու նստեց լուսամուտի մոտ։

— Այդ ինչու յես նստել, Ո՛լյա,— ասում է մայրիկը,— գնայիր զբոսնելու։

— Սպասում եմ, վոր ճյուղերի տերևները բացվեն։

— Դու շատ ես շտապում։ Տերևները բացվելու համար մի քանի որ է հարկավոր։



Մեկ ելհանկարծ ծիտիկը վրա թռավ։ Ճյուղից բռնեց ու շիշը շուռ տվեց։ Ջուրը թափվեց, իսկ ծիտիկը վախեցավ—թռավ պահարանի գլուխը։

— Ցեկ, շիշը տանենք խոհանոց,— ասում է մայրիկը։—Ծիտիկն այնտեղ չի թռչի։— Առավոտները լվացվելիս ստուգիր, տես՝ տերևներ չկան արդյոք։ Հենց վոր տերևները բացվեն, այդ ավազակին բաց կթողնենք։ Թող դուրսը չարաճճիություններ անի։ Նա այնտեղ ավելի ազատ կլինի։

ՁՈՒՐ ԵՆ ԽՄՈՒՄ

Անցավ յերկու որ։

Ույան առավոտյան զարթնեց, ու մայրիկը նրան ասաց.

— Գնա խոհանոց, լվացվիր։ Այնտեղ քո տերևները բացվել են։

Ույան վազ է տալիս խոհանոց։ Իսկ ճյուղերի վրա պըստիկ-պստիկ տերևներ են դուրս յեկել։ Կըպչուն, հոտով։

— Մայրիկ, մայրիկ, — կանչում է Ույան, — տես, ճյուղերն ինչ թելիկներ ունեն։

— Թելիկներ չեն։

— Հրեն, 22ի Չրի մեջ։

— Այդ՝ արմատիկներն են։ Նրանցով ճյուղերը ջուր են ծծում՝ խմում։

Ույան ականջը դնում է 22ին։

— Բա ինչու չի լսվում, թե ինչպես են ծծում։

— Ծիտիկը խմելիս վոր չես լսում, ճյուղերը խմելիս իսկի չես լսի։

Ճաշին հայրիկն աշխատանքից տուն յեկավ։ Ոլյան նրան տարավ տերևներն ու արմատիկները տեսնելու։

Հայրիկը մտիկ տվեց ու սկսեց լվացվել։ Ոլյան ականջը դրեց շշին՝ ուղղակի ճյուղերի մոտ, ու վրնց ե գոռում։

— Ցես լսում եմ, թե նրանք վրնց են ծծում։ Ճիշտ, լսում եմ՝ խ... խ...

— Ա՛յ քեզ անխելք,—ասում ե հայրիկը։— Դու ականջդ ճյուղին ես քսում, այդ ե, վոր լսում ես։ Սպասիր, լուսամուտի տակ մարդ կշինենք, գազար, բողկ կցանենք, են ժամանակ քո ճյուղերն ել կտնկենք։ Դու քո այգին կունենաս։

— Կկանաչի՞ ել։

— Կկանաչի։

Ոլյան մտածեց, մտածեց ու հարցրեց.

— Իսկ ձմեռը ճյուղերը քնո՞ւմ են։

— Քնում են։

Ուրեմն մենակ վոդնիկը չի քնողը։ Ճի՞շտ։ Ծառերն էլ ենք նում, խոտն էլ է քնում, սունկերն էլ են քնում... Իսկ գարնանը զարթնում են։ Վոդնիկը կզարթնի ու կհորանջի, նրանք էլ կհորանջեն։ Վոդնիկը կճմկոտի, նրանք էլ կճմկոտեն։ Վոդնիկը կասի.—«Ես ինչքան քնե՞լ եմ»։ Արդեն գարունը յեկել է»։ Նրանք էլ կասեն.—«Ճիշտ վոր գարուն է, մենք էլ ամբողջ ժամանակ քնել ենք»։ Նա էլ կուրախանա, կուրախանա, նա էլ կսկսի գլխկոնձի տալ։ Ա՛յ, այսպես։

Ույան բարձրացավ թախտի վրա, նստեց գլանիկին, ձեռքերը դեմ տվեց նստատեղին, գլուխը կռացրեց ու գլխկոնձի տվեց։

— Ա՛յ, այսպես։

Ույան այնքան գլխկոնձի տվեց, մինչև հոգնեց։ Հետո Տիմկային հանեց թախտի վրա ու սկսեց թավալգլոր անել։ Թավալգլոր է անում, իսկ նա գոռում է ճղճղում է.—դուրը չի գալիս։

Տիմկան Ույայի ձեռ-

քից պրծավ, թախտից ցած թռավ ու սկսեց անկյունից-անկյուն վազվզել։ Ոլյան էլ՝ նրա հետևից։ Աղմուկի վրա ծիտիկն ուրախանում, սկսում է պահարանի գլխին թռչկոտել ու ծլվլալ։

Հանկարծ Ոլյան կանգ է առնում ու մի նոր բան մտածում։

Մայրիկ, գնանք մորաքույր Կլաշայենց մոտ։ Վոզնիկը կտեսնենք։ Հիմա նա էլ է զարթնել։

— Ցես ժամանակ չունեմ նրա մոտ գնալու։ Հայրիկիդ խնդրիր, թող նամակ գրի։ Մորաքույր Կլաշան քեզ կպատասխանի։

ՎՈՉՆԻԿԸ ՀԵՌԱԽՈՍՈՎ ԽՈՍՈՒՄ Է

— Ավելի լավ է՝ յես ու դու հեռախոսով խոսենք մորաքույր Կլաշայի հետ,— ասում է հայրիկը։ — Միայն սպասիր, թող մութն ընկնի։

— Ինչու մութն ընկնի՝ նոր։

— Չէ՞ վոր դու ինքդ ես ինձ ասել, թե վոգնիկը զարթնում է այն ժամանակ, յերբ մութն ընկնում է։

— Յես հո կարճ քնի մասին չեմ ուզում, յերկար ձմեռվա քնի մասին եմ ուզում հարցնել։

— Յես ել քեզ ձմեռվանի մասին եմ ասում։ Յեթե նա զարթնել է, ուրեմն, իրիկվա դեմ պահարանի հետևից դուրս կգա ընթրիք անելու։ Այդ ժամանակ ել մենք նրա հետ կխոսենք։

— Ի՞նչպես։

— Կլսես ելի։

Հենց վոր մութն ընկավ, նրանք գնացին

իրենց փողոցի անկյունի մեծ տունը։ Այն-տեղ հեռախոս կա։ Հայրիկը զանգահարեց։ Կարգադրեց մորաքույր Կլաշային կանչել։ Մորաքույր Կլաշան մոտեցավ։ Հայրիկն Ալյային բարձրացրեց հեռախոսի մոտ ու փողը տվեց նրան։ Ալյան փողն առավ ձեռքն ու ականջ դրեց։

— Բարև՛, Ա՛լյա։ Ի՞նչ պիտի հարցնես։ Դե հարցրու տեսնեմ։

— Հարցրո՛ւ, թե վոզնիկը զարթնե՞լ է,— Ալյայի ականջին ասաց հայրիկը։

Ալյան վախեցավ, ու հետո հազիվ լսելի ձայնով հարցրեց.

— Վոզնիկը զարթնել է։

— Զարթնել է, զարթնել է,— ասաց ձայնը հեռախոսից։

— Թող ինքն ասի,— խնդրեց Ալյան ավելի կամաց։

— Լավ,— պատասխանեց ձայնը,— բայց մի քիչ սպասիր, յես նրան բերեմ։

Յերկար սպասեցին։ Ալյայի ձեռքը հոգնեց փողը բռնելուց և նա տվեց հայրիկին։

— Դե հիմա լսիր,— և հայրիկը փողը դրեց Ալյայի ականջին։

— Ալյա, դու լսում ես,— հարցրին հեռախոսից։

— Լսում եմ,— պատասխանեց Ալյան ու հանկարծ լսում է՝ փը՛ֆ, փը՛ֆ... Վոզնիկը փնչացնում է։

Ուրեմն, ճիշտ է, զարթնել է։

— Փնչացնում է,— ասաց Ալյան հայրիկին ու հանկարծ սիրտ առավ։

— Բարև՛, վոզնի՛կ,—բարձր գոռաց նա։— Այդ յես եմ, Ո՛ւյան։ Զայնս լսո՞ւմ ես։

Իսկ վոզնիկը նորից՝ փը՛ֆ,—փը՛ֆ...

— Լսում է,—ասաց Ուլյան հայրիկին։

— Դե նրան ասա՛, վոր հյուր ես գնալու էրեն,—խորհուրդ տվեց հայրիկը,—ու գնանք տուն։ Քո ել քնելու ժամանակն է։

— Մենք քեզ հյուր պիտի գանք,—գոռաց Ուլյան ուժովը մեկ ու փողը ձեռքից գցեց։ Հայրիկը հազիվ կարողացավ բռնել։ Բռնեց ու կախ տվեց՝ ուր պետքն է։

Յեվ Ուլյան վազ տվեց տուն՝ մայրիկին պատմելու, թե ինչպես է վոզնիկի հետ հեռախոսով խոսել։

Մյուս որն Ուլյան բոլորի մոտ ել յեղավ Լենայի, Միշայի, մորաքույր Կատյայի... Բոլորի։ Ու բոլորին ել պատմեց վոզնիկի մասին։

ՅԵՂԻՆՋԵ ԽԱՅԹՈՒՆ

Շշի մեջ դրած ճյուղերի վրա պայծառ, կպչուն, հոտով տերևներ են դուրս յեկել։ Դուրսն ել տաքացել է։

Ոլյան սկսում է բարակ շորերով զբոսնել։ Զբոսնում է, զբոսնում ու հանկարծ տուն է վազում, կանչելով.

— Խոտը, խոտը։

Մայրիկը խոտն առնում, մտիկ է տալիս։

— Այս,— ասում է,—յեղինջ է։ Վորտեղից ես գտել։

— Ցանկապատի մոտ։ Այնտեղ շատ կա։

— Դե առ ես զամբյուղը, գնա մի լիքը քաղիր։ Ցես դրանից խաշու կեփեմ։Համով բան է։

Ոլյան զամբյուղովը մեկ քաղեց։ Մայրիկը յեղինջը դատարկեց սեղանին։ Սկսեց ջոկել։

Արմատները, անցյալ տարվա տերևներն ու բոլոր կեղտոտ բաները ջոկեց, գցեց կեղտամանը։ Իսկ յեղինջը լվաց լցրեց թջե ամանի մեջ, վրան միս դրեց, ջուր լցրեց, աղ արեց ու դրեց վառարանի մեջ։

Պահարանից յերեք հատ ձու հանեց, փոքրիկ կաթսայի մեջ դրեց, վրան յեփջուր լցրեց ու ափսեյով ծածկեց—թող յեփվեն։

Հայրիկը ճաշի յեկավ։ Մայրիկը թջե ամանը բերեց։ Ցեղինջե խաշուն լցրեց ափսեները, ամեն մեկի մեջ մի կրպճած ձու դրեց ու վրան կաթ լցրեց։

— Հապա, — ասում է, — փորձենք տեսնենք Ոլյայիս գյուտը։

— Կաց, Ոլյա, յես քեզ համար ձուն դանակով կտրեմ։ Գդալով դու չես կարող։ Հուպ տվիր, թե չե՝ սոթ կտա—դուրս կընկնի։ Վրադ կթափես։



Մինչև մայրիկը կգնար խոհանոցից դանակ բերելու, Ոլյան սկսեց ձուն գդալով սեղմել։ Զգույշ-զգույշ է սեղմում։ Հրես, հրես սոթ կտա։ Նույնիսկ շոգեց—շատ դժվար է։ Բայց և այնպես կտրեց։

— Ա՛հ, ապրես,—ասում է հայրիկը։—Դու արդեն բոլորովին մեծացել ես։ Ցերբ ճաշ ես հնարել, ուրեմն մեծացել ես։

Ոլյան սկսեց խաշուն ուտել։ Ա՛յ թե համով է։

— Ցես ամբողջ ամառը յեղինջ պիտի քաղեմ։

— Այդ մեկն արդեն չե,—ասում է հայրիկը։ Ցեղինջը մատղաշ ժամանակն է լավ։ Մեծացավ թե չե, ել բանի պետք չի։ Գդախանա։ Ամառը մեզ համար դու մի ուրիշ բան կճարես։

ԾԻՏԻԿԸ ԹՌԱՎ ԳՆԱՑ

Դուրսն է՛լ ավելի տաքացավ։ Ծառերի վրա քնքուշ տերևներ դուրս յեկան։ Զյուն բոլորովին չի մնացել ու գետինը բոլորովին չորացել է։ Ցոտն սկսել է դուրս գալ ու բիդ-բիդ ցցվել։

Մայրիկը ձմռվեղկը հանել—տարել է խոր-դանոցը։ Լուսամուտից բամբակները վերց-րել է։

—Հապա՛, —ասում է,—Ծիտիկիդ հետ վո՞նց պիտի անես։ Դո՞ւ դուրս կտանես, թե՞ թող-նենք լուսամուտից դուրս թռչի։

Ույայի ափսոսը գալիս է Ծիտիկին։ Չի իմա-նում ի՞նչ անի։ Լուռ կանգնել նայում է նրան։ Իսկ Ծիտիկը կարծես հենց այդտեղ եր ու այդ-տեղ։ Կպել է փեղկին ու լուսամուտից նայում է դուրս։ Տխուր, նույնիսկ ծպտուն չի հանում։

— Թող ինքը գլխի ընկնի,—ասում է մայ-րիկը,—այդպես ավելի հետաքրքրական է։ Յեթե ինքը դուրս թռչի, մեր լուսամուտը

կհիշի։ Կգա, կայցելի։

— Դե լավ,—համաձայնում է Ալյան։

Մայրիկը լուսամուտը բաց արեց, թարմ ողը լցվեց սենյակը։ Ծառերի վրա ազատ ծիտիկները ծլվլում են։ Ալյայի ծիտիկը հուզվեց։ Սկսեց թևերը թափ տալ, կտցով ապակին ծեծել։ Պոկ յեկավ ուղղակի լուսամուտի գոգը, մայրիկի թևերի տակ։

— Ի՞նչ է, խեղճ,—ասում է մայրիկը,—ազատության հոտ ես առել։ Լավ, լավ, նրատիր, չորս կողմդ նայիր։ Ա՛լյա, մի կտոր հաց տուր։ Ցես բրդեմ սրա առաջ, գրավեմ։



Ալյան այս կողմն է ընկնում, այն կողմն է ընկնում։ Վոչ մի տեղ հաց չկա։ Իսկ ծիտիկն այլևս չսպասեց։ Թը՛ռռ՝ նստեց փեղկի ծայրին։ Կտուցը մաքրեց

այս կողմը դարձավ, այն կողմը դարձավ, ու թը՛ռռ՝ առաջ, մոտիկ ճյուղի վրա։

— Ծիվ, ծիվ... Այսինքն՝ մնաս բարև՛, Ոլյա։ Գլուխ ե տալիս՝ ու ցտեսություն։

— Հրեն, հրեն,—կանչում ե Ոլյան։—Ցես տեսնում եմ նրան։ Հրեն, ծառին նստած ե՝ նստարանի վերևը։

Ոլյան հիշեց, վոր իր գոգնոցի գրպանում հացի կտոր կա։ Հանեց ու բրդեց լուսամուտի գոգը։

— Ծիտիկ, ծիտիկ,—կանչում ե Ոլյան,— յեկ կեր։

Ցեվ սկսեց յեղունգներով թխթխկացնել լուսամուտի գոգը։

Թխթխկացնում ե ու թխթխկացնում, իսկ ծիտիկը պինդ նստել ե ծառին ու տեղից չի շարժվում։ Հետո ավելի վերև ե թռչում և աչքից կորչում։

— Հիմա նա ել յետ չի գա,—հարցնում ե Ոլյան։

— Ինչպես թե չի գա։ Կգա։ Հացի փշրանքը թող լուսամուտին ու Տիմկային նստեցրու սթոռին։

— Տիմկայի՞ն ինչու։

— Վոր կուտ ուտելու ժամանակ կատուն ծիտիկին չբռնի։ Դու ել կճանաչես, վոր այդ

մեր ծիտիկն է։ Ուրիշ ծիտիկները մեր կատվից վախենում են, իսկ մերը չի վախենում։

Ոլյան Տիմկային նստեցրեց աթոռի վրա. նստիր։ Տիմկան նստում, մտիկ է տալիս լուսամուտին։ Ողն է հոտոտում, աչքերը կկոցում։ Իսկ ծիտիկը չկա։

Խեղճն այնպես էլ անտեղի նստեց մինչև իրկուն։ Մայրիկն ընթրիք բերեց։ Հարցնում է նրան.

Այդ ինչ է։ Ինչպես տեսնում եմ մինչև հիմա մնացել ես նստած։

Իսկ նա միայն փռշտաց ու ժպտաց։

— Քո Ոլյան բա ուր է գնացել։

Տիմկան ականջները ցցեց, մարաղ մտավ ու ձգվեց դեպի լուսամուտը։

—Զբոսնում է,—հարցնում է մայրիկը։—Տեսնում ես դրան։ Ինքն զբոսնում է, իսկ Տիմկան նստել է։ Գնա նրան գտիր։ Մեկ

ե, ծիտիկը յեկող չի։ Տես, մութն ինչպես ե ընկել։ Վաղուց մի տեղ քնել ե։ Դե՛, գնա Ոլյայի հետևից, կանչիր թող գա ընթրիքի։

Տիմկան լսում ե «գնա՛», լսում ե «Ոլյա»—այս բանը նա հասկանում ե,—թռչում ե լուսամուտի գոգն՝ ու դեպի բակ։

— Հա՛վ, հա՛վ, հա՛վ։ Այսինքն՝ վո՞ր տեղ ես, Ո՛լյա։ Ընթրելու ժամանակ ե։

ՑՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Դուրսը բոլորովին տաքացել էր։ Նույնիսկ շոգ էր։ Ալյան մինչև մութն ընկնելը մետակ զգեստով վազվզում էր։

Տան մոտի մարգերում սածիլ տնկեցին՝ պամիդոր, վարունգ, գազար, բոլոկ ցանեցին։ Զորս կողմ ճյուղեր էլ տնկեցին։ Ճյուղերի մեջտեղը հայրիկը տաշեղներից նրատարան շինեց և չորս բոլորն ավազ լցրեց։ Յեվ Ալյան արդեն իր այգին ունի։

Ամառն ամբողջ բակը ծածկեց։ Ծառերը տերևներով ծածկվում էին։ Զորս կողմը կանաչ է, ուրախ է։

Ջրհորի մոտի, վորտեղ ճյունե սարն էր, լորենիներից Միշան պարան կապեց։ Կարելի էր ճոճանակի պես ճոճվել։ Ալյան նրս-

տում է պարանին, Տիմկային դնում ծնկնե-
րին ու ճոճվում։

Մի անգամ նրանք ճոճվում են, հանկարծ՝
հայրիկը։

— Յեկ, Ուլյա, հագնվիր։ Գնում ենք գյուղ՝
տատի տունը։

Ուլյան ուրախացավ։ Ճոճանակից ցած թը-
ռավ ու տուն գնաց հագնվելու։ Տիմկան էլ
նրա հետևից։ Գնդակի պես գլորվում է։
Նույնպես ուրախ է։

— Տիմկային էլ պիտի տանեմ,— հարց-
նում է Ուլյան հայրիկին։

— Նրան ուր։ Նա այնտեղ տատի բոլոր հա-
վերին կվախեցնի։

— Չի վախեցնի։ Յես կտամ հավից հոտ
կքաշի, նրանց հետ կծանոթանա ու ձեռք
չի տա։ Տանեմ...

— Նրա համար տոմս
պիտի առնենք։

— Պետք չի... Յես նը-
րան կդնեմ զամբյուղի
մեջ։ Նա զամբյուղի մեջ
մեռածի պես կմնա։

— Դե լավ։

— Տիմկա, նստիր լուսամուտին,— հրամայում է Ալյան,— մի խանգարի։

Տիմկան լուսամուտին նստել՝ դողում է։ Վախենում է, չտանեն։ Հանկարծ ծիվ-ծիվ։ Ծիտիկն իջավ լուսամուտին։ Կտցեց մի փշուրը, կտցեց մյուսը։

— Մայրիկ, մայրիկ,— ասում է Ալյան փսփսալով,— մեր ծիտիկը յեկավ։ Լուսամուտին Տիմկայի հենց պոչի մոտ՝ փշրանքներն ուտում է։ Չի վախենում։

— Նա քեզ ճանապարհ է դնում տատիդ տուն։

Տիմկան պոչը պտտացրեց։ Ծիտիկը վախեցավ, թռավ փեղկի ծայրը։ Ինչպես այն անգամ, յերբ նրան բաց եյին թողնում։

— Նա գալու յե մոտդ,— ասում է Ալյան փսփսալով,— նրան հաց գցիր։ Մի ափսե ջուր դիր մոտը։

Ոլյան պատրաստվեց, հագնվեց։ Տիմկային դրեց զամբյուղի մեջ ու հայրիկի հետ գնաց դեպի տրրամվայ։

Նստեցին տրամվայ։ Հասան կայարան։ Տոմս գընեցին ու գնացք նստան։ Շոգեշարժը ճչաց և նրանց տարավ տատի տուն։

Գարունը վերջացավ, ամառը յեկավ։ Ցտեսություն, Ոլյա։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Սառցալուլան	3
Հեռքերը	7
Վոզնիկը	11
Ձմուշկները	17
Ոլլան ձմուշկներով	21
Ծիտիկը	26
Ոլլան դահուկներով	29
Տոնածառը	33
Նոր տարին	38
Սարը	43
Սահնակով	48
Բերդը	53
Վոզնիկը քնած է	58
Բուքը	62
Ձյունե մարդը	68
Գարունը լուսամուտին	73
Ջուր են խմում	77
Վոզնիկը հեռախոսով խոսում է	81
Ցեղինջե խաշուն	85
Ծիտիկը թռավ գնաց	88
Ցտեսություն	95

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՁԵՌ. ՁԵՌԱԳՐԱՏՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Հեղվական խմբագիր՝ Հ. Գեորգյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Գասպարյան
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան

Գլավլիտի լիազոր՝ Հ—3599 Հրատ. № 4576.
Պատվեր 356. Տիրաժ 3000.
Թուղթ 62×94. Տպագր. 6¼ մամ.
Մեկ մամ. 19200 նիշ. Հեղինակային 2⅓ մամ.
Հանձնված է արտադրության 1 ապրիլի 1938 թ.
Ստորագրված է տպագրության համար 28 ապրիլի 1938 թ.
ԳԻՆԸ 2 Ռ.

Գեսիրատի I տպարան, Ցերեվան, Լենինի 65

5.

Прен. 1940 г.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0004994

ԳԻՆԸ 2 ռ.
204.
22758

ЛЕВ ЗИЛОВ

Оленькина зима

Гиз Арм. ССР, Ереван 1938